

ՀԱՅ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՄԻ ՁԵՌՔԸ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ ՊԻՏԻ ԼԻՆԻ՝ ՃԱՐՏԱՐՎԵՍԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՄԻ ՁԵՌՔԸ՝ ԻՐ ՑԵՂԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՎՐԱ: ԱՅԴՊԻՍԻՆ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՎԱՂՎԱ ԱՌԱՋՆՈՐԴԸ:

Գ.ՆԺԴԵՀ

Շուտով տեղի կունենան նախագահական հերթական ընտրությունները և կընտրվի ՀՀ երրորդ ՆԱԽԱԳԱՀԸ: Նախընտրական խոստումների տեսքով գրեթե բոլոր նախագահի թեկնածուների կողմից բարձրացվեցին և շռայլվեցին արդար, անկախ, արդյունավետ, թափանցիկ, կանխատեսելի, մատչելի և կուռուպցիոն ռիսկերից զերծ դատաիրավական համակարգ ունենալու անհրաժեշտությունը: Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան հուսով է, որ դրանք սուկ նախընտրական խոստումներ չեն, և նախագահական ընտրություններում հաղթող թեկնածուն կունենա քաղաքական կամք և վճռականություն դրանք կյանքի կոչելու ու իրականացնելու: Ինչևէ, նոր սերնդի դատաիրավական բարեփոխումների իրականացումը ներկայիս հրամայականն է: Հասկանալի պատճառներով այդ բարեփոխումները կարող են իրականացնել միայն մասնագիտական բարձր գիտելիքների ու բարոյական հատկանիշների տեր իրավաբանները, ովքեր դրանց իրականացման համար հնարավոր քաղաքական որոշման առկայության դեպքում ի վիճակի են ցուցաբերել համապատասխան կամք և վճռականություն: Եվ այս առումով Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան պատրաստ է իր ամբողջ ներուժը ներդնել Հայաստանի Հանրապետությունում ՆՈՐ ՄԵՐՆԴԻ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՒՄՆԵՐԻ հաջող ընթացքը և անշրջելիությունը ապահովելու համար:



ԼՐԱՅՈՍ

ՇՈՒՏՈՎ ԿՅՐԱՏԱՐԱՎԿԻ ԲՅ ՎՃՈՍԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ 2-ՐԴ ՀԱՏՈՐԸ

ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից պատրաստվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների ժողովածուի երկրորդ մասի բովանդակային ցանկը: Այն իր մեջ ներառում է սահմանադրական առաքելության բարեփոխումների արդյունքում Վճռաբեկ դատարանին վերապահված առաքելության շրջանում կայացված որոշումները՝ սկսած 2007 թվականի հունվար ամսից մինչև դեկտեմբեր ամիսը: Նշված բովանդակային ցանկում ընդգրկված որոշումները ամփոփ հատորով կհրատարակվեն առաջիկայում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՅ ԱՐԱԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԲԵՏ

2008թ.-ի հունվարի 24-ին ՀՀ արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը ընդունել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելության իրավական և քաղաքական վերլուծաբաններ Քերին Գեյներին և Լոլիտա Ցիգանեին: Դիտորդներին հետաքրքրում էին Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի առանձին դրույթների իրավակիրառական որոշ հիմնահարցեր:

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՆՈՐԱՆՀԱՆԱԿ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

2008թ.-ի հունվարի 17-ին ՀՀ արդարադատության խորհրդի նիստում Հայաստանի Հանրապետության Նախագահի ներկայությամբ տեղի է ունեցել նորանշանակ 38 դատավորների երդման արարողությունը, ովքեր դատավոր էին նշանակվել ՀՀ Նախագահի 2007թ.-ի նոյեմբերի 30-ի և դեկտեմբերի 18-ի հրամանագրերով: Ստանձնելով դատավորի բարձր պաշտոնը՝ նրանք երդվել են «դատավորի պարտականությունները կատարել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան, լինել անաչառ և սկզբունքային, արդարացի և մարդասեր, սրբորեն պահպանել դատավորի կարգավիճակին ներկայացվող բոլոր պահանջները՝ ապահովելով օրենքի գերակայությունը և բարձր պահելով դատական իշխանության հեղինակությունը»: Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան շնորհավորում է իր հիմնադիր երկու անդամներին դատավորի բարձր պաշտոնում ընտրվելու կապակցությամբ և մաղթում է, որպեսզի նրանք հետևողական լինեն Հայաստանի Հանրապետությունում արդար, անկախ, արդյունավետ և թափանցիկ դատական համակարգ ստեղծելու՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի մտապատկերի իրականացմանը:

ՎԵՐԱՆՀԱՆԱԿԿԵԼ Է

ՀՀ Նախագահի 2007թ.-ի հունվարի 15-ի հրամանագրով Մանվել Բադալյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ՝ 6 տարի ժամկետով: Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան շնորհավորում է Մանվել Բադալյանին այդ բարձր պաշտոնում վերանշանակվելու կապակցությամբ և մաղթում է բեղմնավոր աշխատանք:

ԼՈՐՂԵՐԻ ՊԱՍՏԻ ԸԱՅԱՄԵՆ ԱՆՂԱՍ ԼՈՐՂ ՋՈՆ ՀԵՐԲԵՐՏ ՍԱՔՔԼԱՍԿԻՆ ՆՃԱՆԱԿՎԵԼ Է ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Մեծ Բրիտանիայի հայտնի իրավաբան, Լորդերի պալատի հայամենտ անդամ Յմահ Բարոն Լորդ Ջոն Հերբերտ ՄաքՔլասկին նշանակվել է Մեծ Բրիտանիայի վարչապետի խորհրդական: Հարող Ուլիստնի կառավարությունում գրադեցնելով Արդարադատության նախարարի պաշտոնը՝ Լորդ Ջոն Հերբերտ ՄաքՔլասկին վարել է Մեծ Բրիտանիայի հասարակական հնչելություն ունեցող քրեական գործերը: 1974-1979 թվականներին Լորդ Ջոն Հերբերտ ՄաքՔլասկին իր գործընկեր Ջոն Սմիթի հետ համատեղ մշակել և անցկացրել է Շոտլանդիայի ինքնավարության օրենսդրությունը, որը առեղի նշանակություն ունեցավ Մեծ Բրիտանիայի պատմության մեջ:

Վերջին տարիներին Լորդ Ջոն Հերբերտ ՄաքՔլասկին ղեկավարում էր միջազգային մեծ հեղինակություն ունեցող Ջոն Սմիթի հիմնադրամը: Արդեն մոտ տասը տարի է, ինչ Ջոն Սմիթի հիմնադրամի շրջանակներում հայ երիտասարդները հնարավորություն են ստացել իրենց ուսումնառությունը կազմակերպել Մեծ Բրիտանիայի հեղինակավոր ուսումնական հաստատություններում: Լորդ Ջոն Հերբերտ ՄաքՔլասկին Ջոն Սմիթի հիմնադրամի շրջանակներում գրեթե ամեն տարի այցելում է Հայաստան:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան նույնպես պատիվ է ունեցել իր կենտրոնական գրասենյակում հյուրընկալել Լորդ Ջոն Հերբերտ ՄաքՔլասկին, որի ընթացքում Չերչիլի Լորդը Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի նախագահ, փաստաբան Կարեն Ջաղոյանին և ասոցիացիայի անդամներին ներկայացրել է Մեծ Բրիտանիայի դատական համակարգը, պատմել իր կենսագրության մասնագիտական կարևորագույն դրվագների մասին և ծանոթացել Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի պատմությանը և գործունեությանը:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան շնորհավորում է Լորդ Ջոն Հերբերտ ՄաքՔլասկին Մեծ Բրիտանիայի վարչապետի խորհրդականի բարձր պաշտոնում ընտրվելու կապակցությամբ:



ՀՀ ՌԻՍ ԿԱՆԱՆՑ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԸ ՎԱՐՉԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ



2007թ.-ի դեկտեմբերի 11-ին և 18-ին Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի Շիրակի մարզային մասնաճյուղի Գյումրիի և Լոռու մարզային մասնաճյուղի Վանաձորի գրասենյակներում անցկացվեցին ՀՀ-ում կանանց քաղաքական մասնակցության ոլորտը կարգավորող օրենսդրության բարեփոխումների վերաբերյալ սեմինարներ: Սեմինարները կազմակերպվել էին ՀԵԻԱ-ի կողմից իրականացվող «Իրավաբանական օգնության և տեղեկատվության օժանդակություն» ծրագրի շրջանակներում: Սեմինարները անցկացվեցին ծրագրի իրավաբան/ՇՊ և լոբբինգի հարցերով մասնագետ փաստաբան Լիանա Հարությունյանի կողմից: Սեմինարներին մասնակցում էին հասարակական կազմակերպությունների և իրավաբանական բուհերի ներկայացուցիչներ, իրավաբաններ:

Քննարկումների սկզբում ներկաների ուշադրությանը ներկայացվեցին գործող ՀՀ Ընտրական օրենսգրքի և «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի այն հոդվածները, որոնք խոցելի էին դարձնում կանանց քաղաքական մասնակցությունը: Այնուհետև սեմինարների մասնակիցները վերլուծեցին ներկայացված հոդվածները և եկան այն համոզման, որ վերոնշյալ հոդվածները անհրաժեշտ է բարելավել՝ կատարելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ: Վերջիններիս վերաբերյալ սեմինարների մասնակիցների կարծիքներն ու առաջարկությունները գրառվեցին և համապատասխան մշակումից հետո,

դրանց հիման վրա ՀԵԻԱ-ի կողմից կատարաստվի և ՀՀ Ազգային ժողով կներկայացվի ՀՀ Ընտրական օրենսգրքի ու «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի կանանց քաղաքական մասնակցությունը խթանող փոփոխությունների օրենսդրական բարեփոխումների փաթեթ:

2008-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՅ ՍԿՍԵԼ Է ԳՈՐԾԵԼ ՆՈՐ ԴԱՏԱԿԱՆ ԸՆՄԱԿԱՐԳ

2008թ.-ի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում սկսել է գործել նոր դատական համակարգ՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ, մասնագիտացված դատարաններ, Վարչական դատարաններ և Վճռաբեկ դատարանը: Վճռաբեկի դատավորների թիվը կրճատվել է և դարձել յոթը:

Ստեղծվել են յոթ նոր դատարաններ՝ քրեական և քաղաքացիական գործերով Երևանի, Հյուսիսային և Հարավային մասնագիտացված թվով վեց դատարանները և թվով մեկ Վարչական դատարանը: Երևան քաղաքի քրեական և քաղաքացիական մասնագիտացված դատարանները տեղակայված են Թբիլիսյան խճուղու վրա գտնվող նախկին Էլեկտրոտեխնիկումի շենքում, Հյուսիսային քրեական և քաղաքացիական դատարանները տեղակայված են քաղաք Դիլիջանում Կալինինի 2 հասցեում, իսկ հարավային քրեական և քաղաքացիական դատարանները՝ քաղաք Շեղզնաձորում՝ Ավազյան 40 հասցեում: Վարչական դատարանը գտնվում է քաղաք Երևանում՝ Գարեգին Նժդեհի 23 հասցեում (Վերաքննիչ դատարանի շենքում):

2008թ.-ի հունվարի 1-ից սկսել է գործել նաև դատական կարգադրիչների ծառայությունը: Այն դատարանում հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից կապահովի դատավորի, դատավարության մասնակիցների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Դատական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո կպաշտոնավարեն 1050 դատական ծառայողներ և 800 դատական կարգադրիչներ:

ՆՆՈՐԿՎԵԼ ԵՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

ՀՀ Նախագահի հրամանագրով Հայաստանի Հանրապետության դատական ղեկավարամենտի ղեկավար Արսեն Մկրտչյանին շնորհվել է ՀՀ դատական ծառայության առաջին դասի բարձրագույն խորհրդականի դասային աստիճան, իսկ Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի աշխատակազմի ղեկավար Էդգար Մեղրակյանին՝ ՀՀ դատական ծառայության երկրորդ դասի բարձրագույն խորհրդականի դասային աստիճան: Այս առիթով «Իրավաբանական լրատուն» շնորհավորում է նրանց:



ԵԱԿ ԸԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԸՆՐԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2007 թ.-ի ընթացքում Հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ մի քանի հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ ստեղծվեցին հակակոռուպցիոն հանրային ընդունարաններ Երևանում, Մարտունիում և Ստեփանավանում: Ընդունարաններում քաղաքացիներին տրամադրվում է անվճար իրավաբանական և ընթացակարգային խորհրդատվություն՝ մի շարք ոլորտներում կոռուպցիայի հնարավոր դեպքերի կանխարգելման և կոռուպցիոն ռիսկերի մասին իրազեկման նպատակով: Խորհրդատվությունը տրամադրվում է թե փորձագետների հետ հանդիպումների, թե ընդունարանում գործող թեժ գծի միջոցով:



ԸՆԴՈՒՆԱՐԱՆՆԵՐԻ ՎԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԵՆ.

անվճար խորհրդատվություն տրամադրել բնակչությանը հանրային առողջապահության, կրթության, բանակի և գորակոչի, փոքր և միջին ձեռնարկությունների, հանրային ծառայությունների և սպառողների իրավունքների, ճանապարհային ոստիկանության և վարորդների իրավունքների, քաղաքացիական, վարչական, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունքների ոլորտներում,

շահառուներին պարզաբանել իրենց իրավունքները պաշտպանելու իրավաչափ ճանապարհները,

տրամադրել տվյալ իրավիճակին վերաբերող համապատասխան օրենսդրական փաստաթղթեր,

անհրաժեշտության դեպքում օգնել շահառուին կազմել հայցադիմում:

ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ

Ընդունարանի գործունեությունն ուղղված է հատկապես կոռուպցիայի դեպքերի կանխարգելմանը, ինչն իրականացվում է շահառուներին՝ օրենքով սահմանված իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացման և իրավագիտակցության մակարդակի բարձրացման ճանապարհով: Այս դեպքում էականը քաղաքացիների ցանկությունն է՝ պայքարել ոչ միայն իրենց բարօրության, այլև հենց կոռուպցիայի արմատավորման դեմ:

Երևանում գործող Հակակոռուպցիոն հանրային ընդունարանն իր գործունեության 8 ամսվա ընթացքում ունեցել է շուրջ 900 շահառու (253 այց և 613 գանգ), որոնց տրամադրվել է խորհրդատվություն տարբեր ոլորտներում:

Խորհրդատվություն տրամադրելուց բացի հասարակության իրավագիտակցությունը բարձրացնելու և իրավական գրագիտությունը զարգացնելու նպատակով կազմակերպվում են տարբեր միջոցառումներ ու հանդիպումներ: Հակակոռուպցիոն հանրային ընդունարանների ծրագրի շրջանակներում 2007թ. ընթացքում տպագրվել են մի շարք ձեռնարկներ և տեղեկատվական նյութեր, որոնք լայնորեն տարածվել են Երևանում և մարզերում:

Ընդունարանի գործունեության փորձը ցույց է տալիս, որ Հայաստանում կոռուպցիայի հիմնական պատճառներից է նաև քաղաքացիների ցածր իրավական կուլտուրան և իրավական նիհիլիզմը: Քաղաքացիները շատ հաճախ տեղյակ չեն իրենց իրավունքներից և չգիտեն, թե որն է իրենց խնդրի լուծման համար պատասխանատու մարմինը, տեղյակ չեն այդ մարմիններում գործող ընթացակարգերի, այդ մարմինների կողմից մատուցվող ծառայությունների գնացուցակների մասին: Սա հանգեցնում է կոռուպցիոն ռիսկերի՝ քաղաքացի-պետական տարբեր մարմիններ շփման ընթացքում: Նշված գիտակցմանը է պայմանավորված ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից հակակոռուպցիոն հանրային ընդունարանի ստեղծումը և գործունեությունը: Ընդունարանը գործում է Թումանյան 39, բնակարան 1 հասցեով: Խորհրդատվությունը տրամադրվում է նաև 53-16-88 հեռախոսահամարով:



**ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՃԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐԱԿԱՆ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ մենք թևակոխեցինք ավելի ազատ համակարգ և ընտրեցինք ժողովրդավարական և իրավական պետություն կառուցելու ճանապարհ, շատ երևույթների և հարցերի հանդեպ մեր ընկալումներն ու պատկերացումները փոխվեցին, կյանքի ամենատարբեր ոլորտներում սկսեցինք բարեփոխումներ ու վերափոխումներ իրականացնել: Սակայն որոշ ոլորտներում իրականացվող բարեփոխումները մակերեսային բնույթ են կրում և չեն հանգեցնում արմատական վերափոխումների: Բարեփոխվող ոլորտներից մեկն էլ մեր պետության արդարադատության համակարգն է: Հայաստանի դատական համակարգը առաջին անգամ արմատապես փոխվեց 1999թ.-ին, որի արդյունքում ձևավորվեց եռաստիճան դատական համակարգ: Սակայն այդ բարեփոխումների արդյունքում այդպես էլ չձևավորվեց անկախ դատական համակարգ, որը կվայելեր հասարակության գերակշռող մասի վստահությունը: Ուստի հասարակության մեջ արմատավորվեց այնպիսի կարծիք, որ մեր դատարանները ավելի շատ անկախ են օրենքից, քան իշխանության մյուս թևերից և տարբեր տեսակի ներազդեցություններից: Սակայն բոլորիս գիտակցության մեջ պետք է հստակ և անշրջելիորեն ամրագրվի, որ դատարանները երրորդ իշխանություն են, որոնք պետք է գերծ մնան ցանկացած ճնշումներից ու ներազդեցություններից: Դրական կարելի է գնահատել այն միտումը, որ մեր համաքաղաքացիները փորձում են առկա վեճերը կարգավորել դատական կարգով: Սակայն դեռևս պահպանվում է խորհրդային տարիներից եկող հասարակական այն կարծիքը, որ դատարանը ավելի հակված է պաշտպանել իշխանության շահերը: Շատ կարևոր է, որ դատավորները հստակ գիտակցեն, որ իրենք իրականացնում են ԱՐԴԱՐԱՐԱՆՏՈՒԹՅՈՒՆ, որ իրենցից է կախված Հայաստանի՝ որպես իրավական և ժողովրդավարական պետության կայացումը, մեր պետության միջազգային հեղինակությունը և մեր համաքաղաքացիների վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ: Ի տարբերություն մեզ՝ այս ամենի գիտակցումը շատ ավելի արագ է ընթանում սոցիալիստական անցյալ ունեցող եվրոպական պետություններում: Տարիներ առաջ տողերիս հեղինակը հնարավորություն ունեցավ այս հարցերը քննարկելու Բուլղարիայի երիտասարդ դատավորների հետ, որոնք համոզված էին, որ նրանք այս կամ այն գործը քննելիս չպետք է հաշվի առնեն շահագրգիռ պաշտոնյայի ցանկությունը, քանի որ դա կարող է բացասական սովորեցնել իրենց դատական կարիերայի վրա: Առավել ևս, որ այդ պաշտոնյան պաշտոնավարելու է շատ ավելի կարճ ժամանակ, քան դատավորը:

Ժողովրդավարական պետություններում նորմալ է ընդունվում, եթե հասարակությունը քննադատում է օրենսդիր, գործադիր իշխանությունները, այս կամ այն պաշտոնյայի արտահայտած կարծիքը: Սակայն պետությունը, որտեղ հասարակությունը քննադատում և չի վստահում դատարանին, իրականում ժողովրդավարական և իրավական հանդիսանալ չի կարող: Դա նշանակում է, որ այդ պետությունում արդարադատություն լիարժեքորեն չի իրականացվում, օրենքները անշեղորեն չեն կատարվում, և մարդու իրավունքները բավականին թույլ են պաշտպանվում: Ցավալի է այն հանգամանքը, որ Հայաստանում փաստաբանությունը որպես ինստիտուտ դեռևս չի կայացել և շատ դեպքերում մարդիկ հանդիպում են այնպիսի փաստաբանների, որոնք, պահի հրամայականով թելադրված, նյութական շահը ավելի են գերադասում մասնագիտական էթիկայից, իրենց հեղինակությունից և իրենց վստահողների շահերից: Այս ամենը վկայում է այն մասին, որ մեր պետության արդարադատության համակարգը արմատական բարեփոխումների կարիք ունի: Այս բարեփոխումներում իրենց զգալի դերակատարումը



պետք է ունենան նոր սերնդի իրավաբանները, որոնք, բարձր մասնագիտական գիտելիքներ ունենալուց բացի, կլինեն նաև սկզբունքային, պատասխանատու, հայրենասեր և բարոյական բարձր հատկանիշներով օժտված:

Այն, ինչ մեզ մտահոգում է այսօր մտահոգել է նաև մեր մեծ նախնիներին, ուստի պատահական չէ, որ հայ իրավական որոշ հուշարձաններում դատարանին և դատավորի վարքագծին ու կարգավիճակին վերաբերող բավականին արդիական դրույթներ են ամրագրվել մինչ օրս: Այս կապակցությամբ կցանկանայի կատարել մի մեջբերում Ներսես Շնորհալու «Թուրք ընդհանրական» աշխատությունից (1166թ.), որտեղ իշխանավորներին դիմելով ասված է. «Անիրավությամբ մի դատք որևէ մեկին, այլ ուրիշ դատաստան արեք, որպեսզի Աստված էլ ձեզ քաղցրությամբ դատի և ոչ խստությամբ: Կաշառքը, կողմերից մեկին սիրելը, ատելությունն ու ռիսակալությունը կամ որևէ մեկից սպասվելիք պատիվը թող պատճառ չլինեն, որ դատի ժամանակ անիրավին արդարացնեք և արդարի իրավունքները խեղաթյուրեք, որպեսզի սրանց պատճառով ձեր հոգիները արժանի չլինեն Աստծո օրինաց անձեքին»: Դատարանների գործունեությանը և դատավորի կեցվածքին վերաբերող բավականին առաջադեմ նորմեր են ամրագրվել նաև Մխիթար Գոշի «Դատաստանագրքում» (1184թ.): Ըստ Գոշի՝ դատարանի նպատակը պետք է լինի արդարության բացահայտումը, մարդկանց միջից խռովությունը վերացնելը, նրանց համերաշխեցնելը, իսկ դատավորը պետք է օժտված լինի և տեսական գիտելիքներով, և աշխատանքի փորձ ունենա, որպեսզի անսխալ

վարի դատական գործը: Դատավորը պետք է չափահաս լինի, գիտակ, անկաշառ, որպեսզի սխալ որոշում չկայացնի և համարձակ լինի դատարանում ու արդար և այլն: Ըստ նրա՝ դատավարությունը պետք է ընթանա մրցակցային սկզբունքով և վկաների ներկայությամբ: Արդար և անկողմնակալ դատավարության վերաբերյալ դրույթները տեղ են գտել նաև Կիլիկիո Սպարապետ Սմբատի «Դատաստանագրքում» (1265թ.): Այս ամենը վկայում է, որ մենք՝ հայերս, պատմականորեն ունեցել ենք արդար դատական համակարգի վերաբերյալ ճիշտ պատկերացում: Պետք է կարողանանք օրենքով ամրագրվածը կիրառել կյանքում և, հինգ վերցնելով դրականը, նրան զարգացում հաղորդել ապագայում:

Հայաստանում դատական համակարգի ևս մեկ վերափոխում տեղի է ունենում ներկայումս, որի արդյունքում 2008թ.-ի հունվարի մեկից ներդրվել է նոր դատական համակարգ: Այս դատական համակարգի շրջանակներում մեզանում առաջին անգամ գործելու են նոր դատական ատյաններ՝ մասնագիտացված դատարաններ: Մեր դատական համակարգի զարգացմանը միտված քայլերը ողջունելի են, սակայն որոշ մասնագետների կարծիքով ՀՀ Դատական օրենսգրքը զգալի թերություններ և անճշտություններ ունի, որոնք չեն կարող ներկայացվել այս հոդվածի շրջանակներում: Սակայն կցանկանայի կանգ առնել կարևորագույններից մեկի վրա: Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի համաձայն՝ ՀՀ վերաքննիչ դատարանը իր իրավասության սահմաններում վերանայում է ընդհանուր իրավասության, քաղաքացիական և քրեական դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը, բացառիկ դեպքերում նաև օրենքով նախատեսված միջանկյալ դատական ակտերը, ընդ որում, վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Այս դեպքում անհասկանալի և անտրամաբանական է դառնում, թե վերաքննիչ դատարանը, իրավասություն ունենալով վերանայել դատական ակտերը, ինչպե՞ս է օրենսդրի կողմից օժտվում դատական ակտը ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու լիազորությամբ՝ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՉՆԵԼՈՎ ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ:

Նշենք նաև, որ մեր նոր դատական համակարգի գործունեության համար ՀՀ Ազգային ժողովի կողմից քաղաքացիական դատավարության և քրեական դատավարության օրենսգրքերում կատարվել են մեծաթիվ փոփոխություններ, և մեզանում առաջին անգամ ընդունվել է վարչական դատավարության օրենսգրքը: Սակայն, իրավական պետության սկզբունքներին հակառակ, չեն ձեռնարկվել անհրաժեշտ քայլեր նշված փոփոխությունների վերաբերյալ հանրության իրազեկման ուղղությամբ՝ ՉԼՄ-ները այդ ամենին բավարար չափով չեն անդրադառնում, «Պաշտոնական տեղեկագրում» 2007թ. դեկտեմբերի վերջին հրապարակված դատավարական օրենսգրքերի փոփոխությունները շատ արագ սպառվել են, իսկ վերահրատարակումը նախատեսվում է 2008թ. հունվարի վերջին: Փաստորեն ոչ դատավորներին, ոչ իրավապահ մարմինների աշխատակիցներին, ոչ փաստաբաններին, ոչ իրավաբաններին և ոչ էլ հասարակությանը չի տրվում հնարավորություն պատշաճ կարգով ծանոթանալու այս կարևորագույն իրավական փաստաթղթերին և հարմարվելու «խաղի նոր կանոններին»: Մեր իրականության մեջ հասարակությունը ոչ միշտ է պատշաճ կարգով տեղեկացվում փոփոխված «խաղի կանոնների վերաբերյալ»: Օրինակ՝ ճանապարհային երթևեկության կանոնները ՀՀ կառավարության կողմից հաստատվել են 2007թ. հունիսի 28-ին, ուժի մեջ են մտել 2007թ. սեպտեմբերի մեկից, իսկ

ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրապարակվել են 2007թ. սեպտեմբերի 5-ին:

Մինչդեռ նշենք, որ իրավական պետությունը իրավունքի (օրենքի) գերակայության հիման վրա հաստատված համապարփակ քաղաքական կազմակերպություն է, որտեղ երաշխավորվում է մարդու իրավունքների կենսագործումն ու պաշտպանումը: Իրավական պետության բարոյական հենքն են համաձայնակալին արժեքները՝ ազատությունը, արդարությունը, մարդասիրությունը:

Նշենք իրավական պետության որոշ հատկանիշներ.

1. Օրենքի գերակայությունը հասարակական հարաբերությունների բոլոր բնագավառներում:
2. Պետության և իրավունքի հարաբերակցության մեջ իրավունքի առաջնայնությունը, այսինքն՝ պետությունն ինքը ևս պետք է գործի իրավունքի հիման վրա և իրավունքի սահմաններում: Պետության հրապարակած իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավունքի հանրաճանաչ չափանիշներին՝ ազատության, արդարության, հավասարության, մարդասիրության պահանջներին:
3. Անհատի և պետության՝ որպես իրավունքի սուբյեկտների հավասարությունը և նրանց փոխադարձ պատասխանատվությունը:
4. Անձի իրավունքների ու ազատությունների օրենսդրական ամրագրումը և իրականացման մեխանիզմների ապահովումը:
5. Բոլորի հավասարությունը օրենքի և դատարանի առաջ, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը:

Բացի այդ՝ իրավական պետությունը պետություն է, որտեղ գոյություն ունեն հստակ, կայուն և բոլորին հայտնի «խաղի կանոններ» մարդու և իշխանության միջև: Դա պետություն է, որտեղ մարդը հստակ գիտի, թե ինչպես իշխանությունները կարձագանքեն իր վարքագծին, քանզի այդ պետությունում կառավարում են ոչ թե ինքնական պաշտոնյաները, այլ օրենքը:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ մենք դեռ ճանապարհի պետք է անցնենք Հայաստանում լիարժեք գործող և հասարակության վստահությունը վայելող արդարադատության համակարգ ունենալու համար, համակարգ, որը կերաշխավորի արդյունավետ արդարադատության իրականացումը, արդարադատություն, որը իր մեջ կներառի ինչպես բարոյական՝ «ԱՐԴԱՐ», այնպես էլ իրավական՝ «ԴԱՏ» բաղադրիչները: Այս ճանապարհը հաջող հաղթահարելու համար պետք է քաղաքական կամք, քաղաքացիական համերաշխություն, կայունություն, պետության և հասարակության ներուժի մոբիլիզացում, որը կհանգեցնի միևնույն նպատակների և այդ նպատակներին միասնական ջանքերով հասնելու ցանկության իրականացմանը:

ՄԱՐԱՏ ԱՏՈՎՄՅԱԼ

ԵԱՀԿ հակակոռուպցիոն հանրային ընդունարանի իրավաբան, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի Հայաստանի իրավունքի պատմության հանձնաժողովի ղեկավար

ՂԱՏԱԿԱՆ ՇԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՁԱՍՏԱՆԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿՐԻՄԻՆԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՎՊԱՐԿՈՒՄ



Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և ցանկացած այլ երկրում, քաղաքացիական հասարակության ձևավորման ու զարգացման համար անհրաժեշտ և առաջնային պայմաններից մեկը հանցավորության դեմ արդյունավետ պայքարն է, հանցագործությունների պատճառների ու դրանց կատարմանը նպաստող պայմանների վերահանումն ու վերացումը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների լիարժեք պահպանությունն ու պաշտպանությունը հանցավոր ոտնձգություններից: Այդ խնդիրների լուծման պարտականությունը դրված է պետության իրավապահ մարմինների վրա, որոնք կոչված են ապահովելու օրինականությունն ու իրավակարգը երկրում: Հանցագործությունների դեմ պայքարը բազմաթիվ միջոցառումների ամբողջություն է, որոնց մեջ իրենց կարևոր տեղն ու դերն ունեն կրիմինալիստիկական միջոցներն ու մեթոդները: Հանցագործությունների բացահայտման ու քննության գործում գիտատեխնիկական միջոցների և մեթոդների օգտագործման եղանակներից մեկն էլ հանդիսանում է դատական փորձաքննությունների, այդ թվում՝ հեղինակային (հեղինակագիտական) փորձաքննության նշանակումն ու իրականացումը, որի օբյեկտը գրավոր խոսքն է:

Կրիմինալիստիկայում անանուն կամ կեղծանվամբ տեքստերի հեղինակի պարզումն իրականացվում է գրավոր խոսքի հետազոտման հատուկ կրիմինալիստիկական մեթոդներով: Կրիմինալիստիկական հետազոտության այդ տեսակն այլ կերպ անվանվում է նաև կրիմինալիստիկական հեղինակագիտություն կամ դատական հեղինակային (հեղինակագիտական) փորձաքննություն: Պետք է նշել, որ իրավապահ մարմինների

գործունեության ընթացքում հեղինակագիտական փորձաքննություն նշանակվում և իրականացվում է այն ժամանակ, երբ հանցագործության քննության ընթացքում գրավոր նյութեր հետազոտելիս անհրաժեշտություն է առաջանում բացահայտել ոչ միայն գրավոր տեքստը կատարողին, այլ նաև հեղինակին: Բանն այն է, որ շատ դեպքերում անանուն կամ կեղծանվամբ տեքստի կատարողն ու հեղինակը տարբեր անձինք են լինում, երբ, օրինակ, հետազոտվող տեքստը կատարվել է թելադրությամբ կամ արտագրվել է քնօրինակից կամ խմբագրվել է այլ անձի կողմից: Բացի դրանից՝ հեղինակային փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտություն կարող է առաջանալ, երբ անանուն կամ կեղծանվամբ տեքստը կատարվել է մեքենագիր եղանակով: Ընդ որում՝ գրավոր խոսքի հատկանիշները կարող են ուսումնասիրվել ոչ միայն թղթային կրիչի վրա արտացոլված տեղեկատվությունը հետազոտելիս, այլ նաև այն դեպքում, երբ հետազոտության օբյեկտը տեսագրման և ձայնագրման արդյունքում ձեռք բերված ապացուցողական ինֆորմացիան է: Հարկ է նկատել, որ գրավոր տեքստերի կրիմինալիստիկական հետազոտման անհրաժեշտություն կարող է առաջանալ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որոշակի հանցագործությունների քննության ժամանակ: Խոսքը վերաբերում է հատկապես ՀՀ քրեական օրենսգրքով արգելված այն արարքներին, որոնք կարող են կատարվել գրավոր (կամ բանավոր) խոսքի միջոցների օգտագործմամբ: Այդպիսի հանցագործությունների թվին են դասվում, օրինակ, գրապարտությունը (ՀՀ քր. օր. հոդված 135), վիրավորանքը (ՀՀ քր. օր. հոդված 136), սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույքը ոչնչացնելու սպառնալիքը (ՀՀ քր. օր. հոդված 137), հեղինակային և հարակից իրավունքները խախտելը (ՀՀ քր. օր. հոդված 158), շոքոբուծ (ՀՀ քր. օր. հոդված 182) և այլն: Բացի դրանից՝ նյութական կրիչների վրա արտացոլված տեքստը շատ դեպքերում կարող է հանդիսանալ հանցագործության բացահայտման միակ կամ հիմնական ապացույցը, երբ հանցագործության կատարման գործում բանավոր կամ գրավոր խոսքն անմիջականորեն հանցագործության կատարման միջոց չի հանդիսանում, սակայն հանցագործության դեպքի մասին տեղեկությունները գրավոր ձևով իրենց արտացոլումն են գտնում նյութական կրիչների վրա (օրինակ՝ վկայների ցուցմունքներ, փորձագիտական եզրակացություններ և այլն): Վերը թվարկված բոլոր դեպքերում գրավոր խոսքի կրիմինալիստիկական հետազոտությունը ձեռք է բերում կարևոր նշանակություն համապատասխան հանցագործությունների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության և ճիշտ լուծման գործում:

Դատական հեղինակագիտական փորձաքննությունը, ի տարբերություն փաստաթղթերի հետազոտության մյուս տեսակների (մասնավորապես, ձեռագրաբանական փորձաքննության), հիմնվում է գրավոր տեքստի բովանդակային, իմաստային կողմի վրա և նպատակամղված է անանուն տեքստի հեղինակին պարզելուն, այն դեպքում, երբ ձեռագրաբանական փորձաքննությունը հիմնվում է գրավոր տեքստի արտաքին հատկանիշների, գրելու հմտության օրինաչափությունների ու կանոնների վրա և ուղղված է փաստաթղթի կազմման հանգամանքների և եղանակի, ինչպես

նաև դրանում կատարված փոփոխությունների բացահայտմանը և փաստաթղթի սկզբնական բովանդակության վերականգնմանը: Բացի դրանից՝ դատական հեղինակագիտական փորձաքննությունը դուրս է գալիս գուտ ձեռագիր տեքստերի հետազոտության սահմաններից և իր մեջ ընդգրկում է նաև մեքենագիր (այդ թվում՝ համակարգչային եղանակով), ինչպես նաև պոլիգրաֆով և տեխնիկական այլ միջոցներով կատարված տեքստերի հետազոտությունը: Այսպիսով՝ դատական հեղինակային փորձաքննությունը բովանդակում է տեքստի հեղինակի բացահայտման տեսակն (հայեցակարգային) հիմունքները: Այն հիմնված է լեզվաբանության, այդ թվում՝ դարձվածաբանության, քերականության, լեզվի ու գրավոր խոսքի վերաբերյալ այլ գիտելիքների, մարդու խոսքի ընդունակության օրինաչափությունների ու պայմանների, հեղինակին պարզելու նպատակով տեքստի կրիմինալիստիկական հետազոտության մեթոդների վերաբերյալ գիտական տվյալների վրա, որոնք որոշում են գրավոր խոսքի անհատականությունը, յուրօրինակությունը, դրա դինամիկությունը, կայունությունը և փոփոխականությունը: Հանցագործությունների քննության գործում հեղինակագիտական փորձաքննությունն ուղղված է նույնացման (իդենտիֆիկացիոն) և դիագնոստիկական (դիագնոստիկ) խնդիրների լուծմանը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում փաստաթղթերի տեքստերի (մասնավորապես, հայոց լեզվով կատարված) հեղինակին պարզելու նպատակով կրիմինալիստիկական հետազոտումը՝ որպես կրիմինալիստիկական փորձաքննության ինքնուրույն տեսակ, գտնվում է զարգացման շատ ցածր մակարդակի վրա՝ այս ոլորտում համապատասխան մասնագետների, ինչպես նաև մասնագիտական անհրաժեշտ գրականության սակավության պատճառով: Դեռ ավելին, Հայաստանի Հանրապետությունում գործող կրիմինալիստիկական փորձագիտական կենտրոններում հայոց լեզվով կատարված տեքստերի՝ հեղինակին պարզելու նպատակով կրիմինալիստիկական հետազոտություններ շատ հազվադեպ են կատարվում (ընդ որում՝ շատ դեպքերում առանց անհրաժեշտ և/կամ բավարար արդյունքի): Նման պայմաններում հայերեն գրավոր խոսքի կրիմինալիստիկական հետազոտման տեսական հիմունքների մշակումն ու լեզվաբանության բնագավառի գիտական տվյալների օգտագործմամբ կրիմինալիստիկական հետազոտությունների իրականացման մեթոդաբանական համակարգի կատարելագործման համար անհրաժեշտ նախապայամաններ ստեղծելն արդիական է ու հրատապ՝ հանցագործությունների բացահայտման, քննության և լուծման գործընթացի և հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման և մարդու իրավունքների լիարժեք պաշտպանության նպատակներին:

ԼՅՈՒԿԿԻԳ ԴԱՎԹՅԱՆ

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, ՀՇԻԱ Քրեական իրավունքի համեմատողի ղեկավար

ՇՏ ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԳՐԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՐՈՇ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դատախրավական բնագավառի օրենսդրական վերջին փոփոխությունները որոշակի մտահոգությունների տեղիք են տալիս, որոնց մասին նպատակարար գտանք ներկայացնել մեր տեսակետները: Տրամաբանական կլիներ, եթե օրենսդրական փոփոխությունները միտված լինեին արդարադատության բնագավառի բարեփոխումների երկրորդ փուլում դատախրավական համակարգի ինստիտուցիոնալ կայացմանն ու զարգացմանը: Սակայն, ցավոք, ներկայիս դատախրավական փոփոխությունների գերակշիռ մասը հետադիմական բնույթի են և չեն կարող ապահովել դատական համակարգի զարգացումը: Օբյեկտիվ լինելու համար պետք է նաև նշել, որ որոշ փոփոխություններ իրենց բնույթով դրական են և իրենց մեջ պարունակում են դատախրավական համակարգի որոշակի տարրերի զարգացմանն ուղղված ռացիոնալ հատիկներ: Եվ այս առումով այսօր կարևոր է դիտարկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված որոշ փոփոխություններ:

Նախ և առաջ կցանկանայինք անդրադառնալ դատավորների ինքնաբացարկի ինստիտուտին. մինչև օրենսդրական փոփոխությունները՝ գործը քննող դատավորին կարող էին նաև բացարկ հայտնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածում նշված գործին մասնակցող անձինք: Կատարված փոփոխությամբ դատավորն ինքնաբացարկ է հայտնում իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ: Մինչև փոփոխությունը՝ գործը միանձնյա քննող դատավորի ինքնաբացարկի կամ բացարկի հարցը լուծում էր դատարանի նախագահը, իսկ եթե գործը քննվում էր դատարանի նախագահի վարչություն՝ մեկ այլ դատավոր: Գործը կոլեգիալ կազմով քննելիս դատավորներից մեկի ինքնաբացարկի կամ բացարկի հարցը լուծում էին մնացած դատավորները՝ բացարկվողի բացակայությամբ: Ինքնաբացարկին կամ բացարկին կողմ և դեմ տրված ձայների հավասար քանակի դեպքում ինքնաբացարկը կամ բացարկը համարվում էր բավարարված: Փոփոխված տարբերակով դատավորը ինքնաբացարկ է հայտնում իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ, և հայտնված ինքնաբացարկի միջնորդության քննության արդյունքներով էլ դատավորը կամ ինքնաբացարկ է հայտնում կամ կայացնում է որոշում միջնորդությունը մերժելու մասին: Ըստ էության՝ այս փոփոխությունը խախտում է արդար դատաքննության իրավունքը, կասկածի տակ է դնում դատավորների անաչառությունը և անկողմնակալությունը, սահմանափակում է գործին մասնակցող անձանց իրավունքները, չիմնավորված ձևով ընդլայնում է դատավորների լիազորությունների շրջանակը և վերջին հաշվով իր մեջ պարունակում է որոշակի կոռուպցիոն ռիսկեր:

ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի փոփոխված տարբերակը շահեկանորեն տարբերվում է նախկին տարբերակից: Մասնավորապես, կցանկանայի անդրադառնալ նոր տարբերակի 1-ին կետին, որտեղ նշված է, որ փաստաբանին լիազորագիրը տրվում է հասարակ, գրավոր ձևով և վավերացման ենթակա չէ, ինչպես նաև նոր տարբերակի նույն հոդվածի 3-րդ կետին, համաձայն որի՝ դատական նիստին ներկայացուցչի հետ մասնակցող կողմն իրավունք ունի իր ներկայացուցչի լիազորություններն հաստատելու դատարանի առջև՝ գրավոր սահմանելով վերջինիս լիազորությունների ծավալը: 41-րդ հոդվածում կատարված այս փոփոխություններն, ըստ էության, հատկապես մարզերում, քաղաքացիներին ազատում են ժամանակի անտեղի կորստից, լրացուցիչ ֆինանսական ծախսերից, նուտարական գրասենյակներում հաճախակի հանդիպող անհարկի դժվարություններից, որը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ և օպերատիվ ձևով օգտվել ներկայացուցիչների, մասնավորապես, փաստաբանների ծառայություններից:

Օրենսգրքի 48-րդ հոդվածում կատարված փոփոխությունները որևէ տրամաբանության չեն ենթարկվում: Ըստ հին տարբերակի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները: Սա հստակ, հասկանալի և մատչելի ձևակերպում է, որը տարբերությունների տեղիք չի տալիս: Լուրջ մտահոգությունների տեղիք են տալիս ՀՀ



Քաղաքացիական դատավարության օրենսգրքի նոր տարբերակով շարադրված 48-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 7-րդ կետերը: Համաձայն նույն օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ կետի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ մինչև դատաքննությունը պարտավոր է գործին մասնակցող մյուս անձանց առջև բացահայտել տվյալ պահին իրեն հայտնի այն ապացույցները, որոնց վրա նա հղում է կատարում որպես իր պահանջների և առարկությունների ապացուցման հիմք, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով: Համաձայն նույն հոդվածի 5-րդ կետի՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն հղում կատարելու միայն այն ապացույցներին, որոնց հետ գործին մասնակցող մյուս անձինք սույն օրենսգրքով սահմանված կարգով ծանոթացել են նախօրոք, իսկ ըստ 7-րդ կետի՝ կողմերն իրավունք չունեն ոչնչացնելու կամ քաքցնելու որևէ ապացույց կամ այլ եղանակով խոչընդոտելու դրա հետագոտմանը և գնահատմանը՝ դատավարության մյուս կողմի համար անհնարին կամ դժվարին դարձնելով ապացույցներ հավաքելը և ներկայացնելը: Նման փաստերի առկայության դեպքում դատարանը խոչընդոտող կողմի վրա է դնում հակառակը ապացուցելու պարտականությունը:

Ըստ էության՝ սա խախտում է կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքը, բացառում կամ մեծ հարցականի տակ է դնում արդար և անաչառ դատաքննության հավանականությունը, դատավորին հնարավորություն է տալիս մեծամասամբ ուղղորդել դատաքննությունը իր և շահագրգիռ կողմի համար ցանկալի ուղղությամբ և կանխորոշել գործի էությունը, էլ ավելի է դժվարացնում ներկայացուցիչների, մասնավորապես, փաստաբանների աշխատանքը, մեծացնում է հասարակության և դատարանների միջև առկա անջրպետը, իրավաբանական ծառայությունը, հատկապես փաստաբանի կողմից մատուցվող, էլ ավելի անմատչելի է դառնում հասարակ քաղաքացիների համար, խոչընդոտում է առանց այն էլ չկայացած փաստաբանական ինստիտուտի կայացմանը և վերջապես կարող է նպաստել դատախրավական համակարգում կոռուպցիոն ռիսկերի մեծացմանը:

ԱՐՁԱՎԻՐ ԽԱՆԱՓՅԱՆ

փաստաբան, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի Մյունխի մարզային մասնաճյուղի ղեկավար

Դա տեղի է ունեցել երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտի օրերին, Իտալիայում: Այն ընդհանրապես, երբ զինվորական օդաչու Կ. Լո-Ռիցոն փողոցում համբուրեց իր հարսնացուին, նրան բռնեց զինվորական պարեկը: Մի րոպե օդաչուին մեղադրեցին հասարակական վայրում իրեն ոչ պարկեշտ պահելու համար և դատապարտեցին 3 ամսվա ազատազրկման: Պատերազմից հետո երիտասարդներն ամուսնացան, Լո-Ռիցոն ուսուցիչ դարձավ: 1970 թվականին, նոր օրենքի համաձայն, որպես հին զինվորական ծառայող, նա դիմեց թոշակ ստանալու համար, նրան թոշակով ապահովեցին: Այնուհանդերձ, 15 տարի հետո իտալական ֆինանսական մարմինները իմացան հին օդաչուի պատերազմի ժամանակվա «արարքի» մասին, և 1928 թվականի օրենքից ելնելով, նրան գրեցին թոշակից: Բայց դրանով էլ գործը չփակվեց: Այժմ նա պետք է պետությանը վերադարձնի իրեն «անօրինաբար» վճարված 13 միլիոն լիրան:



- Ի՞նչ միջոցներով եք պահելու դատերս:
- Տարեկան ունենալու եմ հինգ հազար դոլար:
- Դե ինչ, վատ չէ, եթե դրան էլ ավելացնենք տարեկան հինգ հազար կազմող օժիտը:
- Ես հենց այդ հինգ հազարը նկատի ունեմ...

Դատավորը՝ վկային - Վկա, դուք հաստատու՞մ եք, որ տեսել եք, թե ինչպես է մեղադրյալը երեք անգամ կրակել տուժողին: Ասացեք, որքա՞ն հեռու եք գտնվել հարձակման վայրից:
Վկա- Առաջի՞ն, թե՞ երկրորդ կրակոցին:
Դատավոր- Իսկ ի՞նչ է, տարբերություն կա՞:
Վկա - Այո, մոտ կես կիլոմետրի:

-Ամբաստանյալ, ի՞նչ եք ցանկանում ասել ձեր պաշտպանության նպատակով:
-Դատարանից խնդրում եմ հաշվի առնել իմ փաստաբանի երիտասարդ լինելը:

Դերասանը դատարան է կանչվում որպես վկա: Երբ գալիս է ցուցմունք տալու նրա հերթը, նա տեղից վեր է կենում և սկսում նայել իր շուրջը:
Դատավորը հարցնում է, թե ում է փնտրում:
-Ես ոչ մի տեղ հուշարարի չեմ տեսնում,- պատասխանում է դերասանը:

-Եվ այսպես, դուք ցանկանում եք ապահարգանվել: Ե՞րբ եք դուք առաջին անգամ նկատել, որ ձեր կինը ձեզ չի սիրում:
- Մեկ տարի առաջ, պարոն դատավոր:
- Իսկ ի՞նչ էր պատահել այն ժամանակ:
- Ես աստիճանավանդակից ընկա փոսը: Իսկ վերևում կանգնած կինս ասաց. «Հովակիմ, քանի որ արդեն ներքևում ես, ածուխը լցրու դույլի մեջ»:

Ֆազուս կղզում տեղադրված էր ողջ Հունաստանում հայտնի ատլետ ֆեոզենի արձանը: Մի ոմն անձնավորություն, հավանաբար ֆեոզենի կենդանության օրոք նրա հետ թշնամական հարաբերությունների մեջ գտնվող մարդ, ամեն գիշեր եկել է արձանի մոտ և նրան խարազանել մտրակով, մխիթարելով իրեն նրանով, որ իբր վիրավորանք է հասցնում ֆեոզենին իրեն: Եվ հանկարծ, անսպասելիորեն, պղնձե արձանն ընկնում է մարդու վրա, ով մտրակում էր, և նրան տրորում: Սպանվածի գավակները հայց են ներկայացնում սպանության վերաբերյալ: Դրակոնի օրենքներով՝ արձանին դատապարտել են ծովը նետելուն: Կղզու բնակիչները անմիջապես դատավճիռն ի կատար են ածել:

-Ի՞նչ է նշանակում խաբեություն իրավաբանական տեսակետից,- քննության ժամանակ իրավագիտության պրոֆեսորը հարցնում է ուսանողին:
-Եթե դուք հիմա ինձ ձախողեք, պարոն պրոֆեսոր, դա հենց կլինի խաբեություն:
-Այդ ինչպե՞ս:
-Քրեական օրենսգրքում պարզ ասված է, որ խաբում է նա, ով օգտվում է մարդու չիմացությունից՝ նրան վնաս հասցնելու համար:

Գերմանացի եպիսկոպոս Իոհան Ֆուզգերը մահվան շեմին կազմել էր կտակ, որով խնդրել է ամեն տարի իր շիրիմի վրա լցնել զինով լի տակառը այնպես, որ «իր մարմինը կարողանա ներծծել այդ անուշահամ հեղուկը»: Այդ նպատակի համար քաղաքացին մեծ գումարներ է թողել:

Իր արարքի համար Լ.-ն ներկայումս կրում է պատիժը, իսկ նրա մայրը, որպես առավել վտանգի աղբյուր, աշխատում է սովխոզում՝ որպես հաշվապահ: (հայցադիմումից)

Հրուշակեղենի ֆաբրիկայում հաճախակի դարձած հափշտակումները վկայում են թողարկված արտադրանքի որակի բարձրացման մասին: (արձանագրությունից)

1990թ.-ի մայիսից Իրանում պատիժ է մտցված հանցուցյալ Այաթոլլա Խոմեյնիի ասույթների աղավաղման համար: Իրանի Ռադիոն հայտարարում է, որ Իսլամ Խոմեյնիի աշխատանքները և հիշատակը պահպանելու վերաբերյալ օրենքում, պառլամենտի ընդունած ուղղման համաձայն, Խոմեյնիի ժառանգության ոչ ճիշտ շարադրման համար նախատեսվում է այնպիսի պատիժ, ինչպիսին է մտրակի 74 հարված տալը, երեք տարվա ազատազրկումը, մեծ չափերի հասնող տուգանքը:

Մատոյան Արաբիայի կառավարությունը երկրի ողջ տարածքում կանանց արգելում է մատել մեքենայի դեկին: Սակայն սա միայն կայսրության հպատակների համար չէ, պատժվում են նաև օտարերկրացիները:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հեռ.՝ (374 10) 54-01-99
 Ֆաքս՝ (374 10) 58-02-99
 Էլ.փոստ՝ legalnewsletter@ayla.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ

Հասցե՝ ք. Երևան,
Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համարը՝
03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

Թողարկման պատասխանատու և խմբագիր՝
Նարինե Կարապետյան

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ»
ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

Տպաքանակը՝ 500 օրինակ
 Ծավալը՝ 1 տպ. մամուլ
 Ստորագրված է տպագրության
 31.01.2008թ.

Տպագրվում է 2006թ. հունիսից